ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՄԻՈՒԹԻՒՆ

انجمن فرهنگی ، ورزشی واجتماعی
ارامنه **ساردارآباد** شماره ثبت : ۳۵۹۳

<SARDARABAD> ARMENIAN CULTURAL

Թեհրանի Հայ Մշակութային «Սարդարապատ» միութեան Բողոքի նամակ Հայաստանի Հանրապետութեան Կառաւարութեանը

Տարիներ շարունակ է որ սփիւռքիս ողջ սերունդների երազանքն է եղել, ունենալ ազատ ու անկախ հայրենիք, և բազմաթիւ պայքարներ մղեց հայ դատի ոգեշունչ գաղափարը, մտածելակերպը փոխանցելի դարձնելու ողջ մարդկութեանը և իրաւունքները վերատիրացման ուղի դարձնելու :

Ահա մեր օրերին մտահոգւած ենք մեր հայրենիքի սահմաններին հասած դարաւոր թշնամու ոտնձգութիւնների առումով , սակայն հաւատում ենք յանուն ազգի ու հայրենիքի մեր միասնական պայքարին :

Համակրելով մեր հայրենիքի ժողովրդի ցոյցերին որոնք իմի գալով ու բռունցք դառնալով , պահանջում են Հայաստանի ու Արցախի փրկութիւնը տեր կանգնել և իրենց արդար պահանջն են ներկայացնում, բայց աւաղ մեր հայրենիքի կառաւարութեան ու ոստիկանութեան միջոցով բռնի ուժ գործադրելով ոտնահարում են այս արդար պահանջները խստօրէն դատապարտում :

Այսու մեր բողոքի ձայնը միացնում ենք ցուցարար մեր հայրենակիցներին և զօրակցում ենք նրանց պայքարին և փաստում որ սփիւռքը իր կողքին է միշտ ու առ հաւետ :

Յարգանքներով

Հայ Մշակութային « Սարդարապատ» միութեան

Վարչութիւն

08 /05/ 2022 թ. Թեհրան :

نشانی: تهران، خیابان شهید آجاره دار، خیابان دهمقری ارامنه، نبش کوچه آندریاس، پلاک ۱۲۷
کد پستی: ۱۶۳۷۹۱۸۶۸۱ تلفن: ۸۸۴۱۱۳۰۶ – ۸۸۴۰۳۴۲۱

نشانی: تهران، میدان زندان قصر، اول خیابان شهید برادران باباخانلو (سربار)، کوچه ملائک صفت، پلاک ۲۵
کد پستی: ۱۶۳۹۹۵۶۳۵۱ تلفن: ۸۸۴۱۱۳۰۶